ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«26» նոյեմբերի 2015 թ. N **247-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻՆ «ՌՈԴԻՖԱԿՈՒՄ Ս» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից 2015 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետության մարզերում կատարված մոնիթորինգի արդյունքները՝ մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել՝

1) 2015 թվականի աշնանը մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության մարզերին հատկացվող «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցի բաշխացուցակը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հողօգտագործողների միջոցով մկնանման կրծողների դեմ «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցով պատրաստված գրավչանյութով պայքարի միջոցառումների իրականացման հրահանգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Կազմակերպության տնօրեն Ա. Ավագյանին՝

1) ապահովել «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցի տեղափոխումը Հայաստանի Հանրապետության մարզկենտրոններ և անհատույց հանձնումը մարզպետարաններին կամ վերջիններիս կողմից լիազորված անձանց՝ սույն հրամանի N 1 հավելվածով սահմանված չափաքանակներով,

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ մինչև հաջորդող ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինան-սատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել հաշվետվություն օգտագործված «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցի քանակության վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի առաջին տեղակալ Գ. Բաղիյանին և նախարարի տեղակալ Ս. Գալստյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ գուղատնտեսության նախարարի
2015 թվականի նոյեմբերի 26-ի N 247-Ա հրամանի

ԲԱՇԽԱՑՈՒՑԱԿ

2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆԸ ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ «ՌՈԴԻՖԱԿՈՒՄ Ս» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ

Մարզը	Տարածությունը (հա)	Բույսերի պաշտպանության միջոցի քանակը (կգ)
Արագածոտն	3000	240
Արարատ	450	36
Արմավիր	4700	376
Գեղարքունիք	3000	240
Լոռի	2400	192
Կոտայք	1125	90
Շիրակ	3750	300
Սյունիք	3812,5	305
Վայոց ձոր	62.5	5
Տավուշ	2700	216
Ընդամենը	**25000**	**2000**

Հավելված N 2

ՀՀ գուղատնտեսության նախարարի
2015 թվականի նոյեմբերի 26-ի N 247-Ա հրամանի

ՀՐԱՀԱՆԳ
ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ «ՌՈԴԻՖԱԿՈՒՄ Ս» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԳՐԱՎՉԱՆՅՈՒԹՈՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերին մեծ վնաս են պատճառում դաշտամկների երկու տեսակներ՝ սովորական և հասարակական:

Բարենպաստ կլիմայական պայմաններում դաշտամկները կարող են կարճ ժամանակամիջոցում արագ բազմանալ և տարածվել հազարավոր հեկտարների վրա:

Դաշտամկների դեմ արդյունավետ քիմիական պայքար կարելի է կազմակերպել գարնանը և աշնանը, երբ դաշտերը զերծ են փարթամ բուսականությունից և բնանցքերը տեսանելի են:

Դաշտամկների դեմ պայքար իրականացվում է մկնասպան «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցով (այսուհետ՝ թունանյութ) թունավորված գրավչանյութով:

Բույսերի պաշտպանության միջոցի նկարագրությունը՝ ազդող նյութը բրոդիֆակումն է, որի պարունակությունը պատրաստուկում կազմում է 2.5 գ/կգ, սպիտակ փոշի է: Այն ուժեղ թունունակ է, պատկանում է նոր սերնդի հակակոագուլյանտ ազդեցության թույների խմբին: Կրծողներին սպանում է 3-8 օրվա ընթացքում:

Թունավորված գրավչանյութի պատրաստման տեխնիկան՝ 1կգ թունավորված գրավչանյութ պատրաստելու համար օգտագործվում է 20 գրամ թունանյութ, 30-40 գրամ բուսական յուղ և 1կգ գրավչանյութ: Գրավչանյութի համար օգտագործվում է ցորեն, գարի կամ վարսակ (հատիկ):

Հատիկին նախօրոք ավելացվում է բուսական յուղ, այնուհետև թունանյութը և խառնվում այնքան մինչև բոլոր հատիկները հավասարապես ծածկվում են թունանյութով:

Օգտագործման եղանակը՝ մկնանման կրծողներով թույլ վարակվածության դեպքում՝ 1 հեկտարի վրա մինչև 50 բուն, թունավորված գրավչանյութը՝ 10-15 հատիկ,

գդալով լցնել բնանցքները կամ դրանց շուրջը, իսկ միջին և բարձր վարակվածության դեպքում՝ 50-100 և ավելի բուն, շրջակա միջավայրի անվտանգությունն ապահովելու նպատակով թունավորված գրավչանյութը տեղադրել կարվալինից կամ ստվարաթղթից պատրաստված 30 սմ երկարության խողովակներում: Մեկ հեկտարի վրա տեղադրել 25 հատ խողովակ միմյանցից 15-20 մետր հեռավորության վրա: 1 սեզոնի ընթացքում թունավորված գրավչանյութը տրվում է ոչ ավելի քան 2 անգամ՝ 1-2 շաբաթ ընդմիջումով:

1 հեկտարի համար օգտագործվում է 4 կգ թունավորված գրավչանյութ:

Գրավչանյութը պատրաստելիս և օգտագործելիս անհրաժեշտ է ճշտորեն կիրառել նախազգուշական և անվտանգության միջոցառումները:

Թունավորված գրավչանյութի հետ աշխատողները պետք է ապահովված լինեն համապատասխան արտահագուստով, պաշտպանիչ դնչակալով, ռետինե ձեռնոցներով, որոնք կբացառեն թունավորված գրավչանյութի շփումը մաշկի հետ:

Թունավորված գրավչանյութը պետք է պատրաստել կենտրոնացված կարգով, մասնագետի հսկողությամբ, հատուկ հարթակների վրա կամ բաց տարաների մեջ:

Պայքարի աշխատանքները սկսելուց առաջ համայնքի ղեկավարը պարտավոր է հայտարարության ձևով և լրատվական միջոցներով իրազեկել ազգաբնակչությանը պայքարի միջոցառումների իրականացման մասին:

Թունավորված գրավչանյութերով մշակված տարածքներում 20 օր արգելվում է անասունների արածեցումը: